ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **09.11.2022թ.**

Հիմք ընդունելով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 2022 թվականի նոյեմբերի 7-ի N 13-Լ որոշումը Տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանի ներկայացրած զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին դիմումը քննարկելու նպատակով անցկացվել է արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Հեռակա քվեարկությունը սկսվել է 2022 թվականի նոյեմբերի 7-ին ժամը 14:00 և ավարտվել 2022 թվականի նոյեմբերի 9-ին ժամը 14:00:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանի ներկայացրած զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին դիմումին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Սարգսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Ս. Սահակյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
3) Ա. Խոջոյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
4) Ա. Սարգսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
5) Վ. Հովհաննիսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
6) Ժ. Մայիլյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
7) Տ. Քեյանը օրակարգի հարցին քվեարկեց դեմ (ներկայացրել է դիտարկում՝ կցվում է),
8) Շ. Դանիելյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ:

Չի քվեարկել (ձեռնպահ) Ս. Սահակյանը:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի հարցին **7 կողմ, 1 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանի ներկայացրած զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին դիմումին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԴԻՏԱՐԿՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՏԻԳՐԱՆ ՔԵՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 07-09.11.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԴՐՎԱԾ ՀԱՐՑԻ

Օրակարգ՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանի ներկայացված զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին դիմումին:

*Ծանոթ լինելով պարոն Ավագյանի մասնագիտական հմտություններին և գիտակցելով, որ այս ոլորտում առկա են կարգավորման ենթակա բազում խնդիրներ, որոնց լուծումը պարոն Ավագյանի պաշտոնավարման ընթացքում ավելի իրատեսական եմ համարում՝ հավանություն չեմ տալիս առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանի ներկայացված զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին դիմումին, **«դեմ եմ»**:*

Սույն դիտարկումները հանդիսանում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 07-09.11.2022թ. հեռակա (էլեկտրոնային) քվեարկությամբ անցկացված նիստի 09.11.2022թ. արձանագրության անբաժանելի մասը: